ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԼՈՒՍԻՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

★ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
★ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԵԹՈԴՆԵՐ
★ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
★ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ՆԱԽԱԳԻԾԸ
★ ԱՄՓՈՓՈՒՄ
★ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացման հիմնաքարն է: Գաղտնիք չէ, որ ճիշտ ընթերցելը ուղղակի ազդեցություն ունի հանրակրթական բոլոր առարկաների ուսուցման և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վրա: Հետազոտական աշխատանքով ներկայացնում ենք մի ուսումնասիրություն, որն ունի տեսական և գործնական բաղադրիչներ և կրում է շարունակական բնույթ: Աշխատանքի միջոցով բարձրաձայնում ենք ընթերցանության հիմնախնդիրները, փորձում առաջարկել նոր մոտեցումներ՝ ուսումնասիրելով և կիրառելով ընթերցանության ուսուցման արդի պրակտիկան:

Ուսումնասիրվող թեմայի շուրջ կազմված և ընթացքում գտնվող ծրագիրը նախատեսված է միջին դպրոցում հումանիտար և բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար, որպեսզի վերջիններս սովորողների ընթերցանության հմտությունները ներդնեն առարկայական ուսուցման մեջ: Ծրագիրը փորձարկվել է Լեռնապատի Ե.Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոցի 5-9 – րդ դասարանների սովորողների շրջանում: Մեր աշխատանքային փորձով համոզվել ենք, որ ընտրված թիրախային ռազմավարությունները նկատելի արդյունք են տվել. ամենավատ կարդացողն անգամ սկսել է ավելի ճիշտ և սահուն ընթերցել, բարձրացրել է աշակերտների ընթերցանության մոտիվացիան, ստեղծվել է գրագիտության միջավայր, ընթերցանությամբ տարված սովորողների զբաղվածության շնորհիվ նվազել է համացանցի վնասակար ազդեցությունը, զարգացել են ընթերցանության բոլոր բաղադրիչները՝ սահունություն, արտահայտչականություն, ըմբռնում: Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ, այնուհանդերձ, գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով ընթերցանության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Կարծում ենք՝ հետազոտական աշխատանքի թեման արդիական է, և ներկայացված ծրագրային առաջարկը կհամախմբի ընթերցանության հիմնախնդիրները համակողմանի բացահայտել ցանկացող շահագրգիռ մասնագետներին, ինչպես նաև կնպաստի արդյունավետ փորձի փոխանակմանը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԵԹՈԴՆԵՐ

«Ընթերցանությունը մտքի համար նույնն է,ինչ ֆիզիկական վարժությունը՝մարմնի» (Ադիսոն)

Ընթերցանությունը սովորեցնելու ռազմավարությունները հիմնականում կենտրոնացված են իմաստի վրա: Այսինքն՝ նպատակը տեքստի հասկանալը և հաճելի ընթերցանությունն է: Սա իրականացվում է համատեղ, ուղղորդված և անհատական ընթերցանության մեթոդներով: Առավել քիչ ուշադրություն է հատկացվում հնչյունաբանական իմացությանը և հնչյուններին, բայց սա ընթերցանությունը վայելելու համատեքստն է և շատ քիչ ժամանակ է զբաղեցնում:

Երբ միջին դպրոցում սովորողներն սկսում են կարդալ, նրանք արդեն իսկ ունեն ընդգրկուն բառապաշար բաղկացած մի քանի հազար բառերից, որոնց մեծ մասին նրանք հանդիպելու են վաղ ընթերցանության փուլում: Այդ փուլում երեխաները նաև տիրապետում են լեզվի քերականությանը, ունեն գրքերի մասին շատ գիտելիք և արդեն շատ, չափազանց շատ պատմություններ են ընթերցվել նրանց համար: Նրանք հակված են կարդալ սովորելուն: Հինգ կամ վեց տարեկանից ուսուցիչը և աշակերտները աշխատում են գրքերով, որոնք հետաքրքիր են, նկարազարդ, օգտագործում են խոսակցականին մոտ լեզու և կարճ նախադասություններ: Տեքստերը պարունակում են բավականին մեծ թվով կրկնություններ և հաճախակի կանխատեսելի են, բայց հետաքրքիր:

Ընթերցանություն սովորելուն օժանդակում են նաև գրել սովորելը և լսելով սովորելը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ կարդալ սովորելու լավագույն տարիքը վեց կամ յոթ տարեկանն է: Հինգ տարեկանից սկսելը չունի երկարաժամկետ առավելություն ևկարող է դժվարացնել սովորողի՝ ընթերցանության մեջ հաջողելու հավանակությունը:

Դիտարկենք առավել հաճախադեպ եղանակներ, որոնցով դասավանդվում է ընթերցանությունը:

Համատեղ ընթերցանություն: Աշակերտները հավաքվում են ուսուցչի շուրջ եւ ուսուցիչը հաստափոր գրքից կարդում է պատմությունը՝ սովորողներին ցուցադրելով նկարները և գրված բառերը: Ուսուցիչը ներգրավում է

աշակերտներին ընթերցանության մեջ՝ հարցադրումներ անելով, թե ինչ են նրանք մտածում՝ ինչ կպատահի հետո, այսպիսով՝ առաջարկելով նրանց մեկնաբանել պատմությունը: Երբ հնարավոր է լինում, սովորողները կարդում են բառերը բարձրաձայն և միասին: Գործընթացը նման է նրան, երբ ծնողը երեխայի համար ընթերցում է պատմություն քնելուց առաջ:

Համատեղ ընթերցանության գիրքը ընտրվում է աշակերտների կողմից և միևնույն գիրքը կարող է ընթերցվել մի քանի անգամ: Հետագա ընթերցանության պարագայում սովորողները ավելի շատ են ներգրավվում կարդալու գործընթացում: Այլ դեպքերում, սովորողները կարող են վերցնել մեծ գրքի փոքր տարբերակը և կարդալ այն անհատապես կամ զույգերով: Կարդալուց հետո սովորողները նկարում են, գրում, բեմադրում պատմությունը կամ սովորում պատմության հետ առնչվող բառերը:

Համատեղ գիրք մեթոդը չափազանց տարածված է Նոր Զելանդիայի նախադպրոցական ևտարրական դպրոցներում, սակայն պետք չէ թերագնահատել մեթոդի դերը նաև միջինև ավագ դպրոցներում, քանի որ միջին դպրոցում բարձրաձայն համատեղ ընթերցանության եղանակի արդյունավետությունը հենվում է հետազոտության արդյունքների վրա. այս մեթոդի ուժն իր պարզության մեջ է, քանի որ ուսուցիչը պարզապես ժամանակ է հատկացնում աշակերտների համար բարձրաձայն տեքստ ընթերցելուն՝ մոդելավորելով լավ ընթերցողի հմտությունները: Մեթոդը զարգացվել է նորզելանդացի Դոն Հոլդավեի կողմից: Համատեղ գիրքը մեթոդը նպատակ ունի ընթերցողներին ցույց տալու ընթերցանության հաճելի գործընթացը: Այս մեթոդում հաճելի մասը ապահովվում է հետաքրքիր պատմության, ուսուցչի և սովորողի հաղորդակցության, սովորողի կանխագուշակման եւ մեկնաբանության և պատմության վերընթերցման միջոցով: Ընթերցանությունը և հաղորդակցությունը ներառում են հարցադրումներ այն մասին, թե հաջորդիվ ինչ է լինելու պատմության մեջ, միաժամանակ հնարավորություն է տրվում երեխային ավարտել ծանոթ պատմության նախադասությունները, խոսել պատմության վախեցնող եւ հետաքրքիր մասերի շուրջ եւ ուղղակի հաճելի ժամանակ անց կացնել: Ուսուցիչները կարող են ստեղծել կարճ պատմություններ ներառող գիրքը և չնայած դա զբաղեցնում է որոշակի ժամանակ, սակայն այն կարող է օգտագործվել բազմակի՝ արդարացնելով ստեղծման վրա ծախսված ժամանակը:

Ուղղորդված ընթերցանություն: Ուղղորդված ընթերցանությունը կարող է իրականացվել լուռ կամ երբ երեխան կարդում է ընկերոջ, ծնողի կամ ուսուցչի համար: Վոնգի եւ ՄքՆաութոնի (1980) կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ նախքան ընթերցանությունը ունեցած քննարկումները ուսուցչի եւ աշակերտի միջև, օգնում են, որ ընթերցողի կարդացած բառերի քանակը տոկոսային հարաբերակցությամբ բարձր լինեն. միաժամանակ բարձր է լինում ինքնաուղղվող բառերի տոկոսային թիվը: Ուսուցիչը և աշակերտը նայում են գրքի վերնագրին և համոզվում, որ վերնագրի բոլոր բառերը ծանոթ են: Հետո նրանք խոսում են պատմության նկարների մասին եւ կռահումներ անում, թե ինչ կպատահի պատմության մեջ. նաև խոսում են այն մասին, թե ինչ նախնական տեղեկություններ ունի սովորողը թեմայի մասին: Կարևոր բառերի մասին խոսվում է, բայց դրանց ուղղագրությունը չի դիտարկում տեքստային մակարդակում:

Այսպիսով՝ մինչ սովորողի տեքստը կկարդա, պատմության կարևոր բառերը և մտքերը քննարկվել, պարզաբանվել են: Այնուհետեւ սովորողը սկսում է կարդալ տեքստը:

Եթե սովորողը կարդում է բարձրաձայն ուսուցչի համար, ապա լավ կլինի օգտագործել «**կանգնել, հուշել, խթանել** » ընթացակարգը: Սա նշանակում է, որ երբ սովորողը դժվարանում է կարդալ որևէ բառ, ուսուցիչը չի շտապում տալ պատասխանը, այլ կանգ է առնում, որ աշակերտը հնարավորություն ունենա ջանք գործադրելու համար: Եթե սովորողը շարունակում է դժվարանալ, ուսուցիչը օգտակար հուշում է տալիս կապված պատմության կամ նախադասության իմաստի կամ բառի ձևի հետ: Երբ աշակերտը վերջապես կարդում է բառը, ուսուցիչը քաջալերում է նրա հաջողված ջանքերը: Եթե սովորողը կարդում է լուռ, ապա նա կարդում է պատմության մի մասը, որին հաջորդում է քննարկումընթերցվածի մասին. այնուհետեւ սովորողը կռահում է հաջորդ մասին գործողությունները:

Անհատական ընթերցանություն: Անհատական ընթերցանության պարագայում սովորողը ընտրում է գիրքը և լուռ կարդում այն: Լուռ կարդալու ընթացքում ուսուցիչն էլ կարող է կարդալ կամ օգտագործել այդ հնարավորությունը, որ առանձին աշակերտներ կարդան ուսուցչի համար: Տարրական դասարաններում կա անհատական ընթերցանության համար

նշանակված օր և ժամ: Դրա հետ մեկտեղ սովորողներից ակնկալվում է կարդալ նաև դասերից դուրս: Անհատական ընթերցանության մյուս անվանումներն են

Տևական լուռ ընթերցանություն և **Թող ամեն ինչ ու կարդա** մեթոդներ:

Որպես իսկական ընթերցողներ և որպես խրախուսանք՝ սովորողները գտնում, ձևավորում և միմյանց են նվիրում գրքեր և ասույթներ գրքի ու ընթերցանության մասին: Դրանցով կարելի է նաև դասարանային «մագաղաթ» պատրաստել: Աշխատանքը համագործակցային և ընկերական շփումների մեծ հնարավորություն է տալիս:

Այսպես՝ Համաշխարհային նշանակության մեծերի ասույթներն ընթերցանության մասին:

► Պատահական հանդիպումը լավ գրքի հետ կարող է ընդմիշտ փոխել մարդու ճակատագիրը: Մարսել Պրևո

► Գրքերը հեռավորների ու ննջեցյալների ձայներն են. նրանք մեզ դարձնում են անցած դարերի հոգևոր կյանքի ժառանգորդները: Չենինգ

► Սկզբից կարդացեք ամենալավ գրքերը, այլապես կարող է այնպես պատահել, որ չկարդաք դրանք ընդհանրապես: Թորո

►Գրքերն ապահով ու սառը բարեկամներ են: Վիկտոր Հյուգո

► Գիրքը պետք է կարդալ մատիտը կամ գրիչը ձեռքին: Ոչ մի բան այնպես չի ձևավորում ճաշակն ու դատողությունների ճշտությունը, ինչպես դուր եկած հատվածն արտագրելու կամ խորիմաստ միտքը նշելու սովորությունը: Անդրե Մորուա

► Մեզանից յուրաքանչյուրը մյուսների համար փակ գիրք է: Ռոմեն Ռոլան

► Լավ գիրքն այն գիրքն է, որ գրել է լավ մարդը: Վիլյամ Սարոյան

► Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կյանքով: Մարկ Ավրելի

► Գրքերն աշխարհի արտացոլանքն են, որոնք պարունակում են նրա անսահման խորությունը, բազմազանությունն ու անկանխատեսելիությունը:–Ժան Պոլ Սարտր

► Գիրքը լավն է, եթե հեղինակը նրանում արտահայտում է միայն այն, ինչ պետք է, և անյպես, ինչպես պետք է:–Արիստոտել

► Գրքերը նույն թշնամիներն ունեն, ինչ մարդիկ՝ կրակը, խոնավությունը, կենդանիները, եղանակը և իրենց սեփական բովանդակությունը:–Պոլ Վալերի

► Հիշեք. այն ինչ դուք ձեզանից ներկայացնում եք, որոշվում է նրանով, թե ինչ եք դուք կարդում:–Ջիմ Ռոն

►Գրքերն աշխարհի արտացոլանքն են, որոնք պարունակում են նրա անսահման խորությունը, բազմազանությունն ու անկանխատեսելիությունը: Ժան Պոլ Սարտր

Սովորողները կխրախուսվեն նաև՝ իմանալով ընթերցանության զանազան մրցույթների մասին, ինչպես՝ «Անտարես» հրատարակչության և www.dasaran.am կայքի կողմից համատեղ իրականացվող «Ընթերցման օլիմպիադա» 6րդ դասարանի աշակերտների համար: Մրցույթի հիմքում ընկած է «Ընթերցանության մրցույթի» գերմանական մոդելը, որը 1946-ից անցկացվում է Գերմանիայի Դաշնությունում, և գերմանացի մասնագետների համոզմամբ մրցույթի այս ձևով անցկացումը լուրջ և կարևորագույն ազդակ է հանրությանը գրքի հետ կապելու գործում: Նպատակ է դրված «Ընթերցման օլիմպիադայի» միջոցով աշակերտների մոտ բարձրացնել ընթերցանության կարևորությունը՝ ընդհուպ այն աստիճանի, որ 6-րդ դասարանի պատանին իր գիտելիքի շնորհիվ կարողանա դպրոցի և շրջապատի համար դառնալ հերոս:

Այդպիսի մրցույթներ են անցկացվում շատ երկրներում (Ուկրաինա, Գերմանիա, Ռուսաստան, Բրազիլիա և այլն):

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վաղ ընթերցողները սովորում են, թե ինչպես զարգացնեն սահունությունը՝ աշխատելով զույգերով, կարդալով միևնույն տեքստը մի քանի անգամ և արձանագրելով սահունության զարգացման իրենց փոփոխությունը:

Սահունությունը սովորաբար քննարկվում է տարրական դպրոցի ուսուցիչների կողմից՝ իբրև բարձրաձայն կարդացած բառերի քանակ մեկ րոպեում: Չնայած ամբողջական սահմանումը ներառում է ընթերցման ճշգրտությունը, տոնը և առոգանությունը: Աշակերտների ընթերցանության հաջողության չափումը չափազանց կարեւոր է, քանի որ դասարանից դասարան փոխադրվելու զուգահեռ, աղքատիկ սահունությունը դառնում է ավելի մեծ խնդիր:

Աշակերտները կարող են բարելավել իրենց ընթերցանության սահունության ունակությունը, բայց մենք բոլորս գիտենք, որ բոլոր աշակերտները չեն կենտրոնանան ընթերցանության վրա, եթե ուղղակի նրանց գիրք տանք և առաջարկենք կարդալ: Աշխատանքային պրակտիկայի ընթացքում հայտնաբերեցինք, որ եթե կրկնվող ընթերցանությունը, զույգերով ընթերցանությունը և սահունության արձանագրման թերթիկները համադրվում ենք, աշակերտները ավելի մոտիվացված են աշխատելու իրենց ընթերցանության սահունության զարգացման ուղղությամբ:

Դասարանում աշակերտների գրագիտության աճին աջակցելու և սահունության զարգացմանն աջակցելու համար կարող ենք կիրառել երկու հիմնական ռազմավարություններ՝ **կրկնվող ընթերցանություն** և **սահունության արձանագրման թերթիկներ**:

Տեքստի **կրկնվող ընթերցանությունը** աստիճանական աջակցություն է տալիս աշակերտին, որպեսզի ապակոդավորի և հիշի ծանոթ բառերը և միանման վանկերը՝ բարելավելով սահունությունը և ըմբռնումը: Սահունության արձանագրման թերթիկները տալիս են աշակերտներին պատասխանատվություն, մոտիվացնում է նրանց՝ տրամադրելով առաջընթացի մասին տվյալներ: Կրկնվող ընթերցանության և սահունությանարձանագրման թերթիկների կիրառման ինտեգրման համատեքստում, ես օգտագործում եմ մի էջանոց տեքստ: Աշակերտները

կարդում են միևնույն տեքստը երեք անգամ՝ նշելով յուրաքանչյուր փորձ տարբեր գույնի մատիտներով:

Կրկնվող ընթերցանության եւ սահունության արձանագրման թերթիկների կիրառմանը և ինտեգրմանը բավականին արդյունավետ կարելի է միացնել նաև զույգերով ընթերցանությունը: Ենթադրելի է, որ դասարանային միջավայրը կփոխվի դեպի լավը, կբարձրանա նաև աշակերտների ներգրավածությունը եւ պատրաստակամությունը սովորելու նկատմամբ: Կրկնվող ընթերցանությունը հնարավորություն է տալիս տեքստը մի քանի անգամ կարդալ և վարժ ընթերցել, ինչն անհրաժեշտ է գրագիտության հմտության զարգացման համար: Զույգերով աշխատանքը ավելացնում է դրական սոցիալական միջավայրի բաղադրիչը, իսկ սահունության արձանագրման թերթիկները օգնում են աշակերտներին տեսնել իրենց առաջընթացը և շարունակել աշխատել՝ աշխատելով ու շփվելով համադասարանցու հետ:

Կրկնվող ընթերցանության քայլերը: Կրկնվող ընթերցանության քայլերը կարող են դառնալ ռեժիմ՝ կիրառվելով ընթերցանության դասավանդման ժամանակ յուրաքանչյուր օր: Կրկնվող ընթերցանության մեջ ներառված քայլերը կարող են կատարվել թե՛ուսուցչի, թե՛ ուսուցչի օգնականի հետ՝ հետեւյալ ձևաչափի կիրառմամբ:

1.Աշակերտները զույգեր են կազմում եւ ստանում իրենց ընթերցանության նյութերը, որոնք 100-ից 200 բառանոց տեքստեր են: Սրա հետ մեկտեղ աշակերտները ունենում են նաեւ տեքստի կրկնօրինակը, մարկեր եւ տվյալների արձանագրման ձևաթուղթ (տե՛ս հավելված 1-ը ստորեւ):

2.Առաջին աշակերտը ստանձնում է ընթերցողի դերը, իսկ մյուսը՝ հաշվողի: Հաշվողի դերում հանդես եկող աշակերտը կարող է նաև ժամանակ պահել՝ կախված արդյոք ուսուցիչն է հետեւում ժամանակին, թե աշակերտը:

3. Ժամանակաչափի գործարկելուն պես ընթերցողը կարդում է, իսկ հաշվողի դեր ստանձնած աշակերտը նշում սխալ կամ բաց թողնված բառերը: Եթե ընթերցողը տատանվում է բառը արտասանել երեք անգամ, հաշվողը ինքն է կարդում բառը՝ առաջարկելով ընթերցողին կրկնել բառը եւ, ապա շարունակել կարդալը: Տեքստի կրկնօրինակի վրա սխալ կարդացված բառերի վերեւում նշվում է X, իսկ բաց թողնված բառերը մարկերով գունանշվում են:

4.Ուսուցիչը ասում է, որ աշակերտները դադարեցնեն կարդալը 1 րոպե անց, որից հետո հաշվողը հետադարձ կապ է տալիս ընթերցողին եւ առաջարկում կրկնել բաց թողնված բառերը՝ ճիշտ արտասանությամբ:

5.Հաշվողը արձանագրում է կարդացած ճիշտ, սխալ և բաց թողնված բառերի քանակը՝ օգտագործելով տվյալների արձանագրման ձևաթուղթը:

6.Աշակերտը վերստին ներգրավվում է նույն տեքստի ընթերցանության մեջ և ստանում հետադարձ կապ: Աշակերտները կարող են կարդալ տեքստը մոտ 4 անգամ մի դասի ընթացքում:

7. Աշակերտները փոխում են դերերը և վերևում նշված 2-րդից մինչև 5-րդ քայլերը կրկնվում են:

8.Ուսուցիչը և աշակերտները ավարտում են կրկնվող ընթերցանությունը դրական նոտայով:

Հավելված 1: Տվյալների արձանագրման ձևաթուղթ

Ամիս /ամսաթիվ	Հաշվողի անուն	ընթերցողի անուն	Նպատակ	բառերի քանակ	տեքստ	Վերընթերցում	Ընթերցած բառերի քանակ	Սխալ ընթերցած բառեր	բաց թողած բառեր	ճիշտ ընթերցած բառեր	Առաջընթաց

Սահունության արձանագրման թերթիկի կիրառության քայլերը

- Ցանկալի է, որ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծենք արձանագրման պանակ, տեղադրենք և տպենք ընթերցանության տեքստերը, ընտրենք տեքստեր այնպես, որ աշակերտները չհիասթափվեն ընթերցանությունից, բայց միաժամանակ արձագրեն առաջընթաց ծրագրի պահանջներին համապատասխան : Հարկ կլինի ունենալ յուրաքանչյուր տեքստից երկու օրինակ, օրինակներից մեկը կօգտագործի ընթերցող աշակերտը, մյուսը՝ լսող/գնահատող աշակերտը:
- Զույգեր կազմենք:Զույգեր կազմելիս այնպեսպիտի անենք, որ նույն մակարդակի աշակերտները աշխատեն միասին: Հաշվի առեք նաև՝ որքանով են շփվող կամ իներտ աշակերտները: Եթե աշակերտը զգայուն

է, ապա նա կարող է լավ աշխատել հանգիստ բնավորություն ունեցող աշակերտի հետ:

- Պարզաբանում ենք, թե սովորողներն ինչպես աշխատեն զույգերով եւ օգտագործեն սահունության արձանագրման թերթիկը: Բացատրելու համար հավաքում ենք դասարանը շրջանի մեջ, որպեսզի նրանք կարողանան տեսնել ուսուցչին և աշակերտներից մեկին, թե ինչպես եք ընթերցում սահմանված ժամանակում:
- Ժամանակ ենք պահում և առաջարկում աշակերտին կարդալ: Ժամանակի ավարտին կանգնեցնում ենք ժամացույցը, հաշվում բառերի քանակը և ասում աշակերտին:
- Թույլ ենք տալիս աշակերտին արձանագրել սահունության թերթիկում:
- Սկսեք փորձարկումը: Նշում ենք աշակերտ զույգերի անունները, վերհիշում

վարքագծի նորմերը (ձայնի բարձրություն, որտեղ են նստում, ինչպես ստանալ օգնություն) և ուղղորդում ենք նրանց, որ ինքնուրույն կերպով կիրառեն սահունության արձանագրման թերթիկները:

- Քննարկում և շարունակում ենք փորձարկել: Երբ աշակերտները փորձարկեն զույգերով ընթերցանությունը և արձանագրեն թերթիկներում, համատեղ՝ բոլորդ միասին, վերլուծում ենք, թե արդյո՞ք որևէ մեկն ունեցել է դժվարություն:
- Աշակերտների աշխատելու ընթացում ուսուցիչը պտտվում է դասարանում՝ դիտարկելով՝ արդյոք աշխատում են, թե ոչ: Որոշ ժամանակ անց Ձեզանից ավելի քիչ ժամանակ կպահանջի:
- Ժամանակի ընթացքում աշակերտներին հնարավորություն ենք տալիս՝ իրենք սահմանեն իրենց նպատակները: Դարձնում ենք այդ նպատակները կոնկրետ, սակայն թող դրանք չլինեն հանրային, նաև ներառում ենք ժամանակահատվածը, որում կհասնեն նպատակին:

Օրինակ՝ ես կկարդամ 60 բառ րոպեում կամ 1 րոպե կարդալու ընթացքում ես թույլ կտամ ընդամենը 2 կամ ավելի քիչ սխալ:

Այս նախապատրաստությունները ավարտելուց հետո կիրառոում ենք մեթոդը պարբերաբար՝ հատկացնելով դրանք 10 -ից 15 րոպե: Այն օգնում է աշակերտներին կրկնակի բարելավել ընթերցանության արագությունը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

«Ընթերցանության զարգացման» ծրագրի նպատակներն են՝

- նպաստել ընթերցանության որակի բարձրացմանը
- ստեղծել գրագիտության միջավայր նոր մեթոդներով խթանել ընթերցանության զարգացումը հանրակրթական միջին օղակում
- մոտիվացնել աշակերտների ընթերցանության հետաքրքրությունը
- միջառարկայական կապով ընթերցանությունը հիմք դարձնել այլ առարկաների ուսումնասիրության համար
- կիրառել գործնական նոր ռազմավարություններ ընթերցանության սահունության, ըմբռնման, արտահայտչականության զարգացման համար:

«Ընթերցանության զարգացման» ծրագրի խնդիրներ են՝

- նպաստել աշակերտների մոտ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, աշակերտների ընթերցանության հմտությունների որակի բարելավմանը
- ապահովել միջառարկայական կապեր
- ներդնել ընթերցանության սահունության, ընկալման, ըմբռնման կարողունակությունները տարբեր առարկաների ուսումնասիրման գործընթացում
- կիրառել ծրագրի նորույթները ներառարկայական, միջառարկայական, վերառարկայական ինտեգրման միջոցով
- ապահովել ուսուցիչ-աշակերտ-գրադարան համագործակցությունը
- նպաստել միջին օղակի սովորողների ինքնուրույն դատողություններ անելու, խոսք կազմելու, խմբով աշխատելու համագործակցային կարողությունների զարգացմանը:
- սովորողների կողմից ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացում:

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝

- ընթերցանության սահունության ըմբռնման, արտահայտչականության, ընկալման կարողունակությունների զարգացում,

- ուսումնական գործընթացի նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացում,
- սովորողների շրջանում տարբեր առարկաների ուսումնառության գործընթացում ընթերցանության դերի գիտակցում,
- ընթերցանության միջոցով սովորողների վրա համացանցի վնասակար ազդեցության նվազեցում (զբաղվածության շնորհիվ),
- ծրագիրը կնպաստի ուսուցիչների համագործակցությանը, ներդպրոցական և միջդպրոցական արդյունավետ փորձի փոխանակմանը,
- նոր մեթոդների կիրառությամբ սովորողների մոտիվացում,
- սովորողների նախաձեռնությամբ դասարանում և դպրոցում գրագիտության միջավայրի ստեղծում

  յուրաքանչյուր խմբի հետ աշխատելու մեթոդների ընտրություն

  նախնական գնահատում

  վերջնարդյունքի գնահատում

- ամփոփում՝ «Կարդա» աշակերտական կոնֆերանս,
- «Ընթերցանության հորիզոններ» ուսուցիչների կոնֆերանս
- Ծրագրի շարունակականությունն

  Ծրագիրը ապահովում է շարունակականություն և՛ արձակուրդների ընթացքում, և՛ յուրաքանչյուր ուսումնական գործընթացում: Կոնկրետ մենք, ամառային արձակուրդների ընթացքում համագործակցելով գրադարանների,«Գրադարակ» ՀԿ-ի և ՆորԱրար ՀԿ-ի հետ, նախատեսել ենք ընթերցանության ցանկ, «Գրադարակի» միջոցով ստացել ենք գրքերի յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսված փաթեթը, երկու շաբաթը մեկ նախատեսել ենք հանդիպումներ՝ գրքերի փոխանակման, ընթերցածը վերլուծելու, ապրածը ներկայացնելու համար: Ընթերցանության գործընթացը դարձել է շարունակական և որոշ ժամանակ հետո կազմակերպվելու է աշակերտական հերթական կոնֆերանսը՝ յուրահատուկ ծրագրով, դերային խաղով, «Հարցերի անիվ» և «Բոնոյի գլխարկները» մեթոդների կիրառությամբ:

Աշխատում ենք յուրաքանչյուր դասարանի թիրախային խմբի աշակերտների հետ կրկնվող բարձրաձայն ընթերցանություն մեթոդով, նախապես ընտրված տեքստերով, 3/2/1 ռազմավարությամբ և համեմատում ենք նախնական գնահատումը շարունակական աշխատանքի արդյունքի հետ:

Ստորև ներկայացնում ենք դասի պլան՝ 3/2/1 ռազմավարության կիրառությամբ

Դասարան՝ 6-րդ

Ուսուցիչ՝ Լուսինե Գաբրիելյան

Առարկա՝ մայրենի

Դասի թեման՝ Մ.Գալշոյան

Թեման՝ Մ. Գալշոյան «Կռունկ»

Նպատակը՝

- Ընթերցանության սահունության զարգացման 3/2/1 ռազմավարության գործնական կիրառության դիտարկում
- Ընթերցանության ուսուցման վերևից ներքև և ներքևից վերև եղանակների համադրում
- Ընթերցանության հմտության, ինքնուրույն դատողության, խոսք կազմելու, խմբով աշխատելու
- համագործակցային կարողությունների զարգացում
- Միջառարկայական կապի ամրապնդում

Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդման

Համատեղ դասավանդում (ուս. օգնական՝ Մարիամ Հակոբջանյան)

Ընթացքը՝

1) Կազմակերպչական մաս

2) Մուտք՝ մոտիվացիոն-որոնողական հարցադրում ուսուցչի կողմից՝ «Որո՞նք են մեր երկրի երգերը Ձեր կարծիքով»(ենթադրելի է, որ կհնչեն նաև օրհներգը,

բանակի հիմնը, զինվորներին նվիրված երգեր և այլն: Պատասխանները լսում և խմբավորվում են սովորողների օգնությամբ)

3) Ունկնդրել Կոմիտասի «Կռունկ»-ը

4) Տպավորությունների վերհանում

- Ի՞նչ տրամադրություն առաջացավ

- Ի՞նչ երգ(եր) են Ձեզ տխրեցնում//ուրախացնում

- Այսօրվա թեման՝ «Մեր երկրի երգերը»

(Ինչո՞ւ է ընտրված հենց այս ստեղծագործությունը, ինչ են կարծում աշակերտները)

(Վերևից ներքև)

- Ո՞վ է գրել «Կռունկ» երգը

- Ի՞նչ գիտենք Կոմիտասի մասին (հայրենագիտություն, ռուսաց լեզու)

- Հայ երգի Մ. Մաշտոց

6) Սկսում ենք ընթերցել՝ I հատված(էջ 168)

7) Շարունակել ընթերցել՝ 3/2/1 ռազմավարությամբ(էջ 169 վերևից)

I ընթերցում՝ 1 ր (սխալները գրել գրատախտակին)

II ընթերցում՝ 45 վրկ

III ընթերցում՝ 30 վրկ

8) Շարունակել մինչև հատված 2

9) Ներքևից վերև՝ /Վարժ. կատարում/

I շարք՝ Դուրս գրել աշխարհագրական անունները, ցույց տալ քարտեզի

վրա

II շարք՝ Դուրս գրել երաժշտական գործիքների անուններ, լրացնել շարքը

III շարք՝ Դուրս գրել ազգություն ցույց տվող բառերը / լրացնել շարքը/,

բացատրել կազմությունը

Աշխատանք ԱՈՒՊ-ով սովորող աշակերտների հետ. Մեր երկրի երգը

Աշխատանք քարտերով Տխուր//ուրախ երգեր

Թռչուններ

Երաժշտ. գործիքներ

10) Գնահատում (միավորային՝ մեկնաբանելով գնահատականը և ձևավորող)

11) Տնային հանձնարարություն՝ Կարդալ, պատմել, վերնագրել հատվածը,

m-աձև աղյուսակով դուրս գրել պարզ, բարդ, ածանցավոր բառերը

Գտնել տեղեկություններ՝ I շարք՝ Կոմիտասի մասին

II շարք՝ Գալշոյանի մասին

III շարք՝ Կռունկների և չվող թռչունների մասին

Փորձել հիմնավորել՝ ինչու է «Իմ երկրի երգերը» շարքը սկսվում հենց այս

ստեղծագործությամբ:

12) Անդրադարձ՝ Ի՞նչ, ինչպե՞ս, ինչու՞ սովորեցինք(ներկայացնում են աշակերտները):

ԱՄՓՈՓՈՒՄ

Օ՛, գրքերի աշխարհը – տիեզերք է անեզր...(Եղիշե Չարենց)

21-րդ՝ տեխնիկայի դար: Համակարգիչներ, նոութբուք-նեթբուքներ, պլանշետներ և սրանց միջից առանձնացած էլեկտրոնային գրքեր...

Բայց ես նախընտրում եմ գիրքը, որովհետև, ըստ իս, գիրքը ուրիշ է, գիրք ընթերցելն էլ ուրիշ երանություն է...Կան շատ գրքեր,որոնք մենք մի քանի անգամ ընթերցել ենք, խորասուզվել գրքի մեջ, ու հերթով, թերթ առ թերթ, պատկերների պես հետևել աչքի առաջ կատարվող եղելություններին: Էլեկտրոնային գիրքը, թվում է, չի կարող անել այն, ինչ՝ թղթե գիրքը:

Ավարտական հետազոտական աշխատանքում փորձեցինք ներկայացնել մեր համեստ փորձառությունը սովորողների մոտ գրքի և ընթերցանության դերի գիտակցման և արժևորման գործի զարգացման մեջ:

Ընթերցանության սահունության, արտահայտչականության ու ըմբռնման զարգացմանն ուղղված այս ուսումնասիրությունը արդիական է և մշտապես գտնվում է հանրակրթության պատասխանատուների և ուսուցման ու ուսումնառության գործընթացը կազմակերպողների ուշադրության և հոգածության ներքո: Աշխատանքում ներկայացված մեթոդներն ու ռազմավարությունները փորձարկվել են մեր աշխատանքային պրակտիկայի ընթացքում, և նկատելի է անհատական առաջընթաց սովորողների մոտ: Առաջացել է հետաքրքրասիրություն՝ ուսումնառության գործընթացի նկատմամբ, ընդ որում՝ նաև ուսումնական այլ առարկաների ուսումնառության մեջ նկատելի է դարձել աշակերտների ակտիվ ներգրավումը:

Ռազմավարությունն ակնհայտ կիրառելի է նաև ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնառության գործընթացում:

Իհարկե, պետք է հիշել, որ բազմազանությունը ուշադրության համեմունքն է, և տարբեր ռազմավարությունների, մեթոդների և հնարների փոփոխվող և հետաքրքիր համադրումն օգնում է աշակերտների ներգրավմանը ուսումնառության գործընթացին:

Փառք ու պատիվ այդպիսի ուսուցիչներին, որ հաղթահարում են արդի մարտահրավերները, դասը դարձնում առավել հետաքրքիր և ձևավորում են այն հայ քաղաքացուն, որ պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում և մայրենի լեզվի ուսումնասիրությամբ արժևորելու ազգային ոգին և մշակույթը՝ որպես ինքնության բացահայտում և դրսևորում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, Էդիտ Պրինտ, 2012թ
2.Բոգին Գ.Ի. Տեքստի ըմբռնման տիպաբանություն. Դասագիրք. նպաստ. Կալինին, 1986 թ.
3.Ջիմ Ռայթ, Ծրագրահեն չափումներ: Ձեռնարկ՝ ուսուցիչների համար
4. William J. Therrien & Richard M. Kubina, JR., (2006). Developing Reading
Fluency With Repeated Reading. VOL. 41, NO. 3, JANUARY 2006 (PP. 156–160)
https://www.edu
https://escs.am/atopia.org/
https://kznakhimnadram.blogspot.com/